

ԸՆԹԱԳԻԿ

Կանխատեսումները, թե Արարիկը եւ Կենտրոնը համայնքներում խմելու ջրի աղտոտումն առաջիկայում հեղափոխի բռնկումների խթան կարող է դառնալ, չարդարացան Հակառակը արձանագրվել է դեղնափսի սեզոնային հայտնության մակարդակի նվազում 6,4 տկոսով: Անցած արվա նույն այս ժամանակաշրջանում եղել է հեղափոխի A. B. C տեսակների 859 դեղ, այս արի


Սուր շնչառական վարակները դիմագրվելու միակ արդյունավետ միջոցը մնում են կանխարգելիչ միջոցառումները: Դրան հայտնի են բոլորին, եւ դրան օրջանցելը կարող է ճակատագրական դառնալ: Օդակաթիլային ինֆեկցիաների դեմ ամենագործնական մեթոդը ողջ աշխարհում շարունակում է մնալ բժշկական դիմակների օգտագործումը: Եւրոպական մեծագույն Արեւմտյան Եվրոպայի

հովազելու առաջին կոչերը հնչեցրեց Հայկական բժշկական ասոցիացիան: Չարձանալի է, բայց համարժեք արձագանքներ չուսացան: Բժշկական դիմակների առաջին համակիրներն արդեն հայտնվել են «Բարեկամություն» մեթոդի անցուղում, ուր ամսիցադեմ գեներալային առեւտուրը մեծապես բուծի մեջ է, եւ գնորդների ու առեւտրականների մեծական կուսակույմներ կան: Այնուհետև, հասարակական գիտակ

Բժշկական դիմակների առաջին համակիրները հայտնվել են «Բարեկամություն» մեթոդի անցուղում

Ուրիշի առողջությունը հարգելու սկզբունքով

804: Ընդ որում, գերակշռում է A տիպը կամ, ժողովրդի ասած, դեղնափսի: Փոխարենը ողջ հանրապետությունում արձանագրվել է խոզուկով հիվանդացության մակարդակի սեզոնային բարձրացում: Հավելումով է 3278 հիվանդ: Համաճարակաբան Գայանե Սահակյանի հավաստմամբ, տրամ այն երեխաներն են, ովքեր խոզուկի դեմ դասվաստվել են 1994, 95, 96 թթ. հովհարային անջատումների արիներին, երբ դասվաստանյութը հնարավոր չի եղել կայուն վիճակում դառնել, եւ երեխաների օրգանիզմում ինունային դիմադրողականություն չի առաջացել: Առայժմ համաճարակաբանական միակ մտահոգիչ իրողությունը շարունակում է մնալ աշխարհում մոլեկուլո գրիպը, որն օրեցօր նոր տարածվում է նվազում նաեւ մեր հարեւան Ռուսաստանում: Վերջին օրերին հանրապետությունում նշանակալի է գրիպի նվազում, ապակայն եթե նույնիսկ «Ֆուլմիայան» կամ «Պանամայի» 1 դեղով էլ լինի, այդ մասին չենք իմանալու: Հանրապետությունում վիրուսոլոգիական համադասասխան լաբորատորիա չկա:



ուր երկրներում կարելի է փողոցում հանդիպել «դիմակավոր» մարդկանց: Հասարակական գիտակցությունն այնքան կազմակերպված է այնքան, որ անհասն իրեն դասասխանասու է զգում դիմացինի առողջությունը չվստահելու հարցում: Ընդ որում, հիվանդությունների բռնկումների դեղում դիմակներ կրում են եւ առողջները, եւ հիվանդները: Դիմակների միջոցով գրիպի համաճարակից Հայաստանն աղա

ցության վերակազմակերպման առումով մեզանում դեռ ամեն ինչ կորած չէ: Ասենք, որ բժշկական դիմակներ կարելի է հայթայթել դեղատոմսերում 150 դրամով: Գրիպի ինֆուզի, իբրեւ հիվանդություն, սարսափելի չէ: Սարսափելի են նրա բարդությունները, երբ, իբրեւ կանոն արձանակում են օրգանիզմում մնած վիրուսները կամ նույնիսկ թեթեւակի ախտահարված հասվածները: ԿԱՐԵՆԵ ԳՆԱԵԼՅԱՆ

«Վիկտորիա» աղաժողովագրական ընկերությունը սասնեւորդն է, որին դաշի են տալիս

«Ոչ մի կազմակերպության չլիցիտ է քույլ տալ Եւրոպայի կորագել Հայոց ցեղասպանությունից: Մենք դեմ է կարողանումք արդարություն հաստատել եւ վերադարձնել վերադարձնել իրենց զոհված հարազատների ունեցվածքները», նշել է Գլենդեյլից ծանաչված իրավաբան Վարդգես Եղիայանը, որի «Եղիայանի ընկերություն» իրավաբանական գրասենյակը դասական հայոց է ներկայացրել այս անգամ «Վիկտորիա» աղաժողովագրական ընկերության դեմ: Այս մասին է տեղեկացնում էլ, փոստով սացված հարցազրույցում, որեղ նշված է, որ «Վիկտորիա վերսիչուրուց» ճասնեւորդ ընկերությունն է, որի դեմ դասական գործ է հարուցվում նույն նդասակով: «Վիկտորիա» ընկերությունում աղաժողովագրական վկայականներ ունեցող բոլոր զոհված հայերի անունից բազմամիլիոնանոց դասական հայոց ներկայացրել են Վարդգես

Մովսեսյանն ու չորս այլ հայցվորներ, որոնք բազմիցս դիմել են աղաժողովագրական ընկերություն՝ իրենց հարազատների գումարները ստանալու, ու մերժվել: Հայտնի է, որ 1880-1915 թթ. Օսմանյան Թուրքիայում աղորդ բազմաթիվ հայեր օգսվել են «Վիկտորիա» ընկերության ծառայություններից: Ընկերության աշխատակիցները մինչեւ վերջերս անընդհատ մերժել են վերադարձնելի դիմումները՝ անելանելի դրության մասնելով նրանց: Ավելացնենք, որ Վարդգես Եղիայանը 1970-ից ի վեր ստանձնել է վերադարձնելի Եւրոպայի դասականության դասականությունը, եւ նրա ընկերությունը մինչ այս արդեն ինքն այլ աղաժողովագրական ընկերությունների դեմ դասական գործ է հարուցել: Դրանց բվում է «Մարտությանը ընդդեմ Նյու Յորկ լայֆի» «Զյուրիչյանը ընդդեմ «Ամա եւ Ալի» եւ այլ գործեր:

Սուրբ տասարագ Մինգադուրի հայկական եկեղեցում

Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմի հոգեւոր առաջնորդ եւ Հնդկաստանի ու Հեռավոր Արեւելի հայրապետական տասվիրակ Ադամ արք. Պալիոպանը դեկտեմբերի 21-ին կիրակի օրը սուր տասարագ է մատուցել Մինգադուրի տասնականներն հոչակված Ար. Գրիգոր Լուսավորիչ հայկական առաքելական եկեղեցում, տեղեկացնում է այդ առիվ Ավստրալիայից էլ, փոստով սացված հարցազրույցում: Ներկա են եղել հավասարալ հայեր Մինգադուրից, Բանգկոզից, Հոնկոնգից եւ Երջակա Ի թիվս Յնդյան ալվեսիսի եւ ամանորյա մաղթանների, արեւոյակողորդ դրվասանի խոսեր է ուղղել հավաքվածներին իրենց հայկական ինֆուզիան ու Իրիսոնեական հավաքը այդ հեռավոր ալվերում վառ դաշիելու համար: Երեւեաթի օրը՝ դեկտեմբերի 23-ին հոգեւոր հովիվն ու Թաիլանդում ՀՀ տասնավոր հյուրասոս դիկս:

Նորայր Տեր-Գեւորգյանը Մինգադուրի եկեղեցում ընդունել են Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդ մեթոդոլոգի Կիրիլին, որը որդեկան Մոսկվայի տասնականության եկեղեցական արտաին հարաբերությունների բաժնի վարիչ, ներկայումս Երջակայում է Հարավարեւելյան Ասիայի մի Եւրոպայից: Ռուս հոգեւորականը սուր տասարագ է մատուցել հայկական եկեղեցում, որն ամենահին Իրիսոնեական դասականության մի վայրն է երկրում, կառուցված 1835 թվին: Արարողությանը ներկա են եղել Ռուսաստանի, Ուկրաինայի, Ռումինիայի եւ Հունգարիայի ուղեւորները, դեպուսանսների աշխատակիցներ եւ Իրիսոնեական եկեղեցու առաջնորդներ: Եկեղեցական արարողությունից հետո ծաւկերույթ է տվել դիկս. Տեր-Գեւորգյանի եւ հայր Օլեգ Երեւեաթի կողմից ի տասնավ մեթոդոլոգի Կիրիլի:

Ամանորդ երիտասարդների աչքերով

Նոր տարվան դասաստվում են բոլորը՝ անկախ տարիքից, զբաղմունքից, դասակարգից ու դիրքից: Ամեն մեկը հոգս է մտածում ունի՞ գուցե յուրովի, գուցե տարբեր, բայց ամանորյա: Պարզվում է՝ երիտասարդները, որ սովորաբար այլի են ընկնում անհոգությանը, իրականում նույնպես բազմազգաղ են: Ինչ վերաբերում է ուսանողներին, աղա բուհերում գերակշռող կենսական ճանաչողությունն է: Առաջին կուրսեցիների համար այս ամենը նոր եւ անսովոր է: «Մինչեւ կենությունները ամեն օր դասարանում են, միայն կանգնատանում դեկտեմբերի 31-ին եւ հունվարի 1-ին, - ասաց Լուսինե, որ դեպի անկախ օրն անցնում են օրն օր: Բարձր կուրսերի ուսանողները արդեն մի Եւրոպայից իրենց այդ խոսույնը սվել են, բայց Եւրոպայի ու չեն կատարել, այժմ արդեն չեն էլ խոսատանում: «Միեւնույն է, վերջին երկու օրերին եմ դասաստվելու, ավելի լավ է հանգստանալ, ժամանակս ուրախ անցկացնել», ասաց մի չորրորդ կուրսեցի աղջիկ: «Այս տարի լավ է, եղանակը մեր կողմից է: Եւս մյուս, անձեր չի գալիս, հանգստեւ կանգնում ենք, խաղալիքներ էլ չեն կեղտոտվում: Ուրան տները մոտենում են, այնքան համախորդների ճամադրությունը բարձրանում է: Մի փոքրիկ կաթիկ կզենեմ, մի կտոր փայլ, տոնածաղի մի խաղալիք, բայց ուրախ եմ», ասաց Կարենը, որ Ֆիրդուսի տնավանասի մոտ խաղալիքներ է վաճառում: «Դեկտեմբերի 31-ին, մինչեւ ժամը 17.00-18.00-ը կատարենք, հունվարի 1-ին երեքի առեսուր չի լինի, հունվարի 2-3-ից նորից կաշխատենք: Ընկերներս ենք եւ ա

խոսում, մի օր մեկս կգա, մի օր՝ մյուսս, կհասցնենք նաեւ լավ ժամանակ անցկացնել, - հետո մի փչ մտածեց ու ասաց: - չէ, բայց երեքի ավելի լավ կլինեք, որ լաշխատենք, մի Եւրոպայից ու հանգստանալիք: «Տոներն ուրախ անցկացնելու համար փող Եւս դեմ է, - ասաց 24 տարեկան Անահիտը, որ արդեն մի Եւրոպայից կարկանդակ է վաճառում: - Մենք Եւս լավ չենք աղորում, հանրակացարանում իմ հասակակից էլի տղաներ, աղջիկներ կան, որոշել ենք Եւրոպայից միջոցառել գարդարել, մագնիտ-Ֆոն միացնել, ուրախանալ, դարել: Մեղանին անոթայման այս կարկանդակներից կզենեմ, արդեն մի փչ հյուր եմ գնել, ընկերուհիներս Տարբան էլ երեւոյակ, տանով համեղ աղցանի ձեւ է սովորել, դա կդասատարել: Երկու օր կուրախանամ, հետո նորից գործի կգամ»: Արհան, որ 5 տարի առաջ ավարտել է դպրոցը եւ աշխատում է կոնֆեկտի արտադրատանում, Նոր տարվա հետ մեծ հույսեր է կադում: «Կոնֆեկտ Եւս եմ սիրում, - ասում է, - սկզբում մեծ ուրախությամբ էի աշխատանքի գնում, բայց արդեն հոգնել եմ: Տոներից հետո անոթայման նոր աշխատանք եմ փնտրելու, երեքի գրասենյակային մի գործ»: «2003-ը ուրիշի տան եմ դիմավորել, մի փոքրիկ Եւրոպայից ելի գնացել, - ասաց մի երիտասարդ, որն անցյալ տարի Չինա դաղ է եղել: - Հինա արդեն գրաստադարանից հանել եմ Եւրոպայից, գլխարկս, դասատարել եմ մորուսի, որ կրկին ասեմ. «Եւրոպայից օր Նոր տարին, էլ մանուկներ իմ բանկազին»: Ըող որ երիտասարդներս էլ հավասարինք Չինա դաղ, տոներն ավելի գեղեցիկ կլինեն: Եւրոպայից Ամանոր: ԵՄԱՐ ՄԵՆԱՅԱՆ

Լեւոն Աբրահամյանը կրականապես հերքում է Մեծ Սարգսյանի դեմ մահափորձ կատարելու իրեն ներկայացված մեղադրանքը

Երեւան, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԼՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ դասականության նախարար Մեծ Սարգսյանի դեմ մահափորձ նախադասատելու մեջ մեղադրվող ամբաստանյալ Լեւոն Աբրահամյանը դեկտեմբերի 24-ի դասական միսուն կրականապես հերքեց իրեն ներկայացված մեղադրանքը: Երեւանի Կենտրոն եւ Լուր-Մարա Եւրոպայից առաջին ասյանի դասատանում ընթացող դասականության ընթացում նա հայտարարեց, որ մեղադրանքը սուտ է, սաղանք, եւ դրա հեղինակը գործով վկա Արայիկ Եւրոպայից են: Ամբաստանյալը մասնավորապես հայտնեց, որ Եւրոպայից 2003 թ. հունիսին եկել է իր մոտ են հայտնել, որ Արգախում ԼԳՂ Պատասխանության բանակի նախկին Եւրոպայից Սամվել Բարայանի Երջակայի անձինք դիմել են

իրեն Մեծ Սարգսյանին սղանելու տասնվերով, դրա հետեւանով իւրանափոխություն կլինի եւ Բարայանը դուրս կգա բանից: Նարիմանյանը նշել է, որ Մեծ Սարգսյանը Աբրահամյանին էլ է նախկինում մեղադրել եւ բան մատուցել: Ըստ ամբաստանյալի, ինքը ժխտել է այդ տղողումը, նշելով, որ Մեծ Սարգսյանը իրեն բան չի մատուցել, ավելին դրական դեր է խաղացել իրեն ներում Եւրոպայից հարցում: Լեւոն Աբրահամյանը հայտարարեց, որ Եւրոպայից անաղաքել է «օղեւրաշիվ խաղ» սկսել սղանությունը տասնվերով անձին հետ, մի կողմից՝ այն կանխելու, իսկ մյուս կողմից՝ Մեծ Սարգսյանին հաճոյանալու համար: Նա հերքեց, թե 500 դոլար է սվել Եւրոպայից իր ղաղալիքի սարք գնելու համար, սակայն միաժամանակ հաստատեց, որ Եւրոպայից

մանյանի հետ գնացել է դասականության նախարարության Եւրոպայից մոտ, որեղ խոսակցություն է եղել տղալուցիկ սարքի տղադրման մասին: Նախատեսվում է, որ հունվարի 9-ին կայանալիք դասական միսուն մեղադրական ճառով կսկսվի դասական վիճարանությունների փուլը:

Հայ Ձմեռ պապ

«Հայ Ձմեռ պապ» ծրագիրը «ԱրմենիաՆաու» ինտերնետային շաբաթաթերթի նախաձեռնությունն է:

«ԱրմենիաՆաու» 2002 թվականի հուլիսին երևանում հիմնադրված «Նոր ժամանակ» հասարակական կազմակերպության շաբաթաթերթն է: «Նոր ժամանակ» ՀՀ-ն վերապատրաստում է հայ լրագրողներին արևմտյան լրագրության չափանիշներով: Շաբաթաթերթը լույս է տեսնում ամեն ուրբաթ երեկոյան, անգլերեն և հայերեն, ընթերցողներ ունի աշխարհի 74 երկրներում:

Մենք շատ ուրախ կլինենք, եթե դուք այցելեք մեզ www.armenianow.com հասցեով:

«ԱրմենիաՆաուի» աշխատակազմը (որը լուսանկարվել է տարվա ավելի տաք եղանակին) մաղթում է ձեր ընտանիքին երջանիկ տոներ:

ArmeniaNOW.com

Կիսված ընտանիք, անհայտ կորած զինվորի հարազատները ութ տարի տառապում են

Այս ձմեռ Բաբայանների ընտանիքը բնակարանը տաքացնելու միջոցներ չունի: Սովորաբար 23500 դրամ (մոտ 42 դոլար) ընտանեկան բյուջեից կարողանում էին մի փոքր գումար խնայել ձմռան կարիքների համար, բայց այս տարի չկարողացան:

64-ամյա Մարատ Բաբայանը իր երեք դուստրերի՝ Նազենիի, Արփիկեի և Վարսենիկի հետ բնակվում է Երևանի ծայրամասերից մեկում գտնվող իր երեքսենյականոց բնակարանում:


Վարսենիկի առողջական վիճակը, իսկ նա վատառողջ է ամբողջ կյանքում, ավելի է վատացել վերջին տարվա ընթացքում, իսկ դեղորայքը թանկ է:

Բնակարանը նրանք ստացել են խորհրդային տարիներին, երբ ընտանիքն ավելի մեծ էր: Դրանից հետո 1990 թվականին մահացել է ընտանիքի մայրը՝ Ռայա Մարգարյանը: Իսկ 1995 թվականին բանակ զորակոչվելուց շատ չանցած, առեղծվածային հանգամանքներում, հուսափտալից անհետացել է որդին՝ Վահրամը:



«Զգիտեմ ինչ ենք անելու, - ասում է Բաբայանների ավագ դուստրը՝ 31-ամյա Նազենին: - Ամռանը հայրս կարտոնի կտորներ կամ փայտե արկղեր էր բերում աշխատավայրից, դրան ավելացնում էինք մեր խնայած գումարով գնված փայտը և այդպես յուր էինք գնում»: Շատ երևանցիների նման Բաբայանները փայտ ու սովորաբար են հավաքում որտեղ պատահի՝ չորացած ծառերի վրայից ու փողոցի աղբարկղերից: Մակայն երբեք չեն կարողացել բավականաչափ հավաքել երեքսենյականոց բնակարանը տաքացնելու համար և այդ պատճառով հավաքվել են խոհանոցում դրված փոքր փոքր վառարանի շուրջը: Եվ բոլորը ընուն են նույն սենյակում:

Ընտանիքի հույսը, դեռահաս փախստականը դարոցը փոխում առևտրի հետ



Դավիթ Աստոնյանը 15 տարեկան է և ընտանիքի միակ կերակրողն է: Ամեն օր նա Արովյանից Երևան է գալիս (20 կմ), 22եր հավաքում տներից, որոնք հանձնում է ու ստացած գումարով ընտանիքին սնունդ ապահովում:

Աստոնյանների ընտանիքը՝ Դավիթը, նրա 12-ամյա քույրը՝ Մարինեն, և նրանց մայրը՝ Կարինեն, փախստականներ են Ադրբեջանից: Փախել են Բաբայից 1989 թվականին, երբ հայերի համար Ադրբեջանում մտալն այլևս ապահով չէր:

Հայրը տարիներ առաջ գնացել է Ռուսաստան, և նրանից ոչ մի տեղեկություն չկա: Կարինեն սրտային անբավարարություն ունի, և արդեն 3 տարի է, ինչ չի կարող աշխատել:

Ընտանիքի հոգսն ամբողջությամբ ընկած է դեռահաս տղայի ուսերին:

«Դավիթը լավ էր սովորում: Բայց արդեն երկու տարի առաջ մտքում աշխատելն էր, սովորելու մասին էլ չէր մտածում, - ասում է Կարինեն: **Հարուսակությունը՝ էջ 2**

Հավատի սասանված հիմքեր. Նոյեմբերյանի 17 գյուղ Նոր եկեղեցու կարիք ունի

11-ամյա Վիգենը, դպրոցական պայուսակը մեջքին, շնչակտուր վազում է հասակակից տղաների ետևից ու Նոյեմբերյանի բարձրագույն բնակավայրում. «Երեխե՛ք, դե՛նք գնացե՛ք, մտնո՛ւ՛կ մե՛ք»:

Արագ վազելուց այտերը կարմրել են, ճակատին փայլում են քրտիկների կաթիլները: Նա Սք. Սարգիս եկեղեցու ոչ պաշտոնական պահակն է:

«Մենք այս թաղում ենք ապրում: Վիգենը հետևում է, որ ոչ մեկը չմտնի եկեղեցի ու չփչացնի այն, ինչ մնացել է», - ասում է Վիգենի մայրը՝ 31-ամյա Ռսլեմա: Նա Սք. Սարգիս եկեղեցու մոմավաճառն է:

«Երեխեքին թողում չեմ մտնեն, բայց ապակիները քարոզել են, պատուհանից ներս մտել, որ խաղ անեն», - բացատրում է Վիգենը:

Նոյեմբերյանի Սք. Սարգիս եկեղեցում ոչինչ չկա: Հատակին ապակու կտորներ են, քարեր: Պատերը «զարդարված» են մեծ ճաքերով:

«Այս եկեղեցին դժվար կյանք է ունեցել», - ասում է եկեղեցու քահանա տեր Հրայր Բեջանյանը:

Քահանայի խոսքերով՝ վերջին հարվածը եկեղեցին ստացել է 1997 թվականի 7-բալանոց երկրաշարժի ժամանակ:

Երկրաշարժից ընդամենը մեկ ժամ հետո տեր Հրայրը եկեղեցում մնացած ամբողջ գույքը տեղափոխել է շենքին կից գտնվող հովվատունը: Հետո դրանք տեղափոխվել են նախկին կուլտուրայի գրասենյակ, որտեղ էլ այդ օրվանից հավաքվում են շուրջ 100 հավատացյալներ:

«Զի՛կ կարող ամեն ինչի վրա խաչ քաշել ու ասել, որ այլևս եկեղեցի չունենք, չէ՞ որ մարդիկ ունեն այս ամենի կարիքը: Հիմա այս սրահում եմ մատուցում պատարագը, ժամերգությունները», - ասում է նա:

Սք. Սարգիս եկեղեցին կառուցվել է 1848 թվականին: Խորհրդային տարիներին եկեղեցում տեղադրել են մի մեծ գեներատոր: Քահանայի հավաստմամբ՝ աղմկոտ մեքենան խարխիլել է շենքի պատերը:

Այնուհետև եկեղեցին վերածել են կուլտուրայի պահեստի, որտեղ մի քանի օր անց էլ ավերակ էր:

Լոռու և Սպիտակի շրջաններում սպանել են բազմաթիվ հոգևոր սպասավորների: Շատերին էլ քցել են՝ կուլակի կամ դաշնակի կեղծ պիտակ փակցնելով:

«Այն վայրերում, որտեղ հոգևոր կյանքը աշխույժ էր, վանական համալիրներ կային, տեղակայվեցին կոմունիստական քիչները, և սկսեցին արմատախիլ անել հավատքը», - ասում է Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ սրբազան Չուլջյանը:

Սք. Սարգիսը պատկանում է Գուգարաց թեմին, որի մեջ են մտնում Տավուշի և Լոռու մարզերը: Թեմում այսօր գործում է 18 եկեղեցի, իսկ Սք. Սարգիսը 17 գյուղ ու 30 հազար բնակիչ ունեցող Նոյեմբերյանի տարածաշրջանի միակ գործող եկեղեցին է:



- Երկու սենյակ, մեկ ընտանիք. ընտանիքը մեծանում է անդրանիկ որդու անակնկալ վերադարձով**
Երևանյան հիվանդանոցներից մեկում 26-ամյա Լաուրա Երիցյանը հայտնվել էր որոշում կայացնելու անհրաժեշտության առաջ՝ մի որոշում, **Հարուսակությունը՝ էջ 3**
- Ժպիտ ողբերգության միջով. աղջիկը համակերպվում է հաշմանդամության հետ**
Դեռատի, ժպտերես աղջիկը զազայրիչը ոտքով մոտեցնում է գազօջախին, ապա ոտքի մատներով բացելով գազը՝ վառում է այն **Հարուսակությունը՝ էջ 5**
- Բախում կյանքի դժվարությունների հետ. մանկատան մթնոլորտը ջերմ է, իսկ պայմանները՝ սառը**
Երբ բացվում է սենյակի դուռը, Զանաթե-Չեթունի մանկատան երեխաները նայում են սպասումով լի հայացքներով, կարծես **Հարուսակությունը՝ էջ 2**
- Հանուն արվեստի և ոչ միայն. կանայք և դեռահասները բանտում արհեստ են սովորում**
Սենյակում լամպերի դեղնավուն լույսի ներքո կողք կողքի նստած մի քանի անչափահասներ ու կանայք փորձում են կավից ինչ-որ **Հարուսակությունը՝ էջ 4**
- Նվազագույն կենսամակարդակից էլ ցածր. մայրն ու չորս երեխաները պայքարում են նկուղային կյանքի պայմանների դեմ**
Երեկոյան, երբ սովերները թանձրանում են ու ձայները լռում, իսկ ցուրտը դառնում է անտանելի, Երևանյան մի բարձրահարկ շենքի նկուղում **Հարուսակությունը՝ էջ 6**
- Օգնում են լսել. Գյումրիի մշակութային կենտրոնը օգնում է խուլ պատանուն**
Շատ դեռահասների նման 15-ամյա Գյումրեցի Արամ Բաղդասարյանը ուրախանում է, երբ ընտանիքը պառկում է քնելու, և հեռուստացույցը մնում է իրեն: Արամի **Հարուսակությունը՝ էջ 3**
- Կախտված կապեր. ընտանեկան բռնության զոհ դարձածների «Հույսը»**
Վտիտ, կծկված, վախեցած թռչունի աչքերով երիտասարդ կինը գրեթե մանկական անկապ խոսքով, որը Հարուսակ ընդհատվում է հեկեկոցով, փորձում է **Հարուսակությունը՝ էջ 4**
- Հաղթանակի կարիքավորները. Հայաստանի տարեց բնակչության 22 տոկոսը, զրկված ավանդական ապահովությունից, մարդասիրական օգնության կարիք ունի**
Վահան Աբրահամյանը սրտաբաց և խանդավառ տանտեր է հյուրերի համար: Նրա կինը՝ Մարի Զարիջյանը, սուրճ ու քաղցրավենիք է հյուրասիրում, ինչպես **Հարուսակությունը՝ էջ 8**

Մեծագույն 1-ին էջում

Երբ ներկայում էի, քողոզում, թե ինձ համար ինչպես դժվար է, ասում էր՝ մամ, մի տարի էլ դիմացի, ութն ավարտեմ, կգնամ կաշխատեմ, քեզ կօգնեմ»:

Հինգ ամիս առաջ Դավիթն ավարտեց 8-րդ դասարանը և սկսեց աշխատել՝ Երևանում շշեր գնելով կամ հավաքելով ու հետո վերավաճառելով:

«Դռները ծեծում եմ ու հարցնում շիշ ունե՞ք,- պատմում է նա: - Լինում են մարդիկ, որ փող չեն վերցնում, ասում են՝ հայալ ա, տղա չան, եսքան փող տղա՝ ես ու աշխատում եմ, փող պետք չի, վերցրո՞ւ շշերը, տա՛ր: Բայց լինում ա, որ հայտնում են: Ասում են՝ խի՞ ես չի՞տով հեղնում, քո համար չենք փող մոծում, ուզում են խի՞են, քայքայ փախնում եմ: Տղայնանում են, որ ամեն 5 րոպեն մեկ դուռը ծեծում են»:

Դավիթը օրական աշխատում է մոտ հինգ ժամ, հավաքում է մոտ 50 շիշ: Ավելի շատ նրա նվազ ուժերը չեն կարող տանել: «Շամպայնի շիշ չեմ վերցնում, որովհետև ծանր է: Երբեմն էլ, որ շշերը շատ են լինում, ու չեմ կարողանում տանել, կեսը թողնում եմ մեկի մոտ, որ հետո գամ տանեմ»:

Թեև Արմավյան-Երևան երթուղայինը 200 դրամ (մոտ 30 սենթ) արժե, վարորդները Դավիթին արդեն ճանաչում են ու նրանից ուղեվարձի կեսն են վերցնում:

Ամեն շիշը նրան մնում է մոտ 20 դրամ (մոտ 3 սենթ): Ճանապարհածախսը հանած՝ օրական նա տուն է բերում մոտ 500 դրամ (մոտ 85 սենթ), որին գումարված ընտանիքի ամսական 8000 դրամ (մոտ 14 դոլար) աղքատության նպաստը՝ կազմում է ընտանիքի բյուջեն:

«Դավիթի փողով ենք ապրում,- ասում է Կարինեն: - Մնվում ենք հիմնականում հացով, օրական 450 դրամ (մոտ 80 սենթ) հացի փող ենք տալիս: Մի ամիս առաջ հիվանդացել էր, տաքությունը բարձրացավ, երկու շաբաթ պառկեց: Եղ ժամանակ հաց չէինք կարողանում անել»:

Ձմռանը եթե շատ ցուրտ լանի, կղիմանան առանց տունը տաքացնելու, քանի որ փողոցի սենյակն արևկող է: Թեև երեխաները, մանավանդ Մարինեն, շատ են սիրում հեռուստացույցը նայել, այն հազվադեպ են միացնում, քանի որ իրենց հին լամպային սխտեմի հեռուստացույցը շատ էլեկտրաէներգիա է խլում:

Մարինեն սովորում է վեցերորդ դասարանում: Ասում է, որ իրեն դուր է գալիս Արմավյանում ապրելը, և որ Երևանը «վախենալու է»:

«Տղային ու վատ մարդիկ են էնտղ ապրում,- ասում է նա,- ախարս երեսին դուռը փակում են»:

Նրա սիրած առարկան գրականությունն է, իսկ սիրած ստեղծագործությունը՝ «Գիշորը»։ «Էն երեխեն փողը ժամանակվանից աշխատում ա ու թեմազքներ ուտում: Գիշորը լավն էր, համ էլ իր ցույրիկների մասին էր մտածում, կոճակ-մոճակ էր հավաքում իրանց համար»:

Ի տարբերություն երբոր, որ հանգիստ քնավորություն ունի, Մարինեն փողոցի վիրավորանքն իսկ անպատասխան չի թողնում ու հաճախ կոպիտներ մեջ է: Նա նաև տան գործն է անում: Կոպիտներն է վաճառում, տունը մաքրում:

«Երբ հիվանդ եմ, Մարինեն կողքից չի հեռանում,- ասում է Կարինեն, - ընդհանրապես երեխեցիս հարցում իմ քայտը բերել է»:

Երկու տարի առաջ Անտոնյանները ապրում էին վաղուց, վճարում քնակարանի համար 5 հազար դրամ (մոտ 9 դոլար): Մակայն երբ Կարինեի առողջությունը վատացավ, այլևս չէր կարող ծանր աշխատանք կատարել: Նա աշխատում էր փողում, իսկ չուզ ու խոնավությունը վատ էին անդրադառնում հիվանդ սրտի վրա: Կարինեն դիմեց Փախստականների մարտություն և Արմավյան քաղաքի ավտոճանապարհային քոլեջի հանրակրթարանի ինտերնոգ հարկում 14 քառակուսի մետրանոց սենյակ ստացավ:

Հանրակրթարան տեղափոխվելու շնորհիվ Կարինեն արդեն երրորդ անգամ ընդգրկվում է կանադահայ ուսանողների ՍԱՄԱ



(բժշկական օգնության ուսանողական ասոցիացիա) կազմակերպության հագուստ հյուսելու ծրագրի մեջ: Այս ծրագրով ուսանողները արդեն երկրորդ տարին մի քանի հանրակրթարանների 58 փախստական կանանց քրոջա թեղեր են տալիս, որով նրանք հյուսում են սվիտերներ ու գուլպաներ: Աշխատանքի դիմաց կանայք վարձատրվել են մոտ 10 հազար դրամ (մոտ 17 դոլար): Նրանց հյուսածը ուսանողները բաժանել են աղքատ ընտանիքների մոտ 200 երեխաների և 60 ծերերի:

Կարինեն երկու տարվա ընթացքում արդեն վեց սվիտեր ու վեց գուլպ գուլպա է հյուսել: Վերջին հյուսածները ՍԱՄԱ-ի անդամները նվիրել են Կարինեի զավակներին:

«Ես 13 տարեկանից գործում եմ,- ասում է Կարինեն, որ շյուղերը ձեռքին հին գործվածքների թելերից երեխաների համար նոր հագուստ է հյուսում,- այս ծրագիրը իսկը իմ սրտով էր. տանը նստած գործում եմ: Ինչ լավ կլինե, էլի պատվիրեն գործել»:

ՍԱՄԱ-ի մասին տեղեկություններ ստանալու համար դիմեք www.sama-mcgill.org կամ info@sama-mcgill.org հասցեներով: ՍԱՄԱ-ի համակարգող Ստելա Դուկասովայի հասցեն է. Երևան, Սողոմոն Տարնուցի 5, հանրակրթարան, սենյակ 308, հեռախոս (374-1) 48-09-41: «Արմենիանուի» «Հայ Ձմեռ պայպ» ծրագրում Կահան Իշխանյան ներդրում անելու համար զանգահարեք 53-24-22:

Լուսանկարները՝ Արթուր Թորոսյան

Բախում կյանքի դժվարությունների հետ. մանկատան մթնոլորտը ջերմ է, իսկ պայմանները՝ սառը

Երբ քաջվում է սենյակի դուռը, Զանաքեռ-Չեթունի մանկատան երեխաները նայում են սպաստումով չի հայացքներով, կարծես ամեն ներս մտնող այստեղ է եկել իրենց տուն տանելու: Երկու տարեկան Կահանը վազում ու շերտորեն փարվում է անծանոթ վնոցը՝ համբուրելով ու թաթիկներով շոյելով նրա դեմքը: Երեխաներից մեկը հարցնում է. «Դուք նրան տո՞ն եք տանելու»:

Այդ հարցին հավաքեալ են հաստատական պատասխան տալիս:

1967-1999 թվականներին այս շենքը մանկապարտեզ էր, որտեղ մանուկները հանգստանում ու խաղում էին, իսկ երեկոյան մայրիկների ու հայրիկների ձեռքն ապահով բռնած գնում տուն: Մակայն հինգ տարի առաջ ժամանակի պահանջով այն վերածվեց մանկատան, որպեսզի հոգա այն հայ մանուկների կարիքները, որոնց ծնողները չեն ցանկացել կամ ի վիճակի չեն եղել պահել նրանց:

Մանկատանը հարազատ տուն է դարձել 113 երեխայի համար, որոնք քաժանված են տարիքային խմբերի՝ 1-8 տարեկան: Այստեղ նրանց ապրում ու կրթվում են՝ շրջապատված խաղալիքներով ու ջերմ ժպիտով:

Նույն տարիքային խմբի երեխաները տեղավորված են նույն սենյակում, որը միաժամանակ ննջասենյակ, ճաշասենյակ ու խաղասենյակ է: Մանկատան լողասենյակները վերջերս նորոգվել են Ֆրանսիական քարեգործական մի կազմակերպության միջոցներով: Ութ տարին քոլորած երեխաներին տեղափոխում են «Չափիկ» մանկատուն, որը նախատեսված է մեծ տարիքի երեխաների համար:

«Չափազանց դժվար է հարազատ դարձած երեխաներին տալ ուրիշի ձեռքը, սակայն այստեղ նրանց պարզապես հնարավոր չէ պահել»,- ասում է ավագ մանկավարժ Զնարիկ Չաքարյանը: Այս մեծ ընտանիքի «ծնողները» հաճախ են այցելում իրենցից հեռացած երեխաներին և երբեք չեն մոռանում նրանց ծննդյան օրերը:

Մանկատան ամենափողոցիկ քնակիցը 1 տարին



ընդունած Թագուհին է, որն ընդամենը մեկ շաբաթ առաջ է բերվել մանկատուն: Այսօր նա ցուցից կծկվել է իր խնամակալի գրկում ու գուլիքը դրել նրա կրծքին:

Իսկ 4-ամյա Ջուլյան նկարում է: Նա ասում է, որ նկարում իր մայրիկն է: «Գիտեմ, որ իմ մայրիկը չի գալու, որ ինձ տուն տանի,- ասում է աղջնակը: - Ես այստեղ եմ մնալու, սա է իմ տունը»:

34 տարվա շենքը կառուցման օրից չի նորոգվել, սակայն մանկավարժների հնուտ ձեռքերով հնամաշ պատերը զարդարվել են նկարներով, երեխաների պատրաստած տիկնիկներով ու այլ աշխատանքներով:

Զանաքեռ-Չեթունի մանկատանը կատարյալ տուն չէ երեխաների համար, սակայն ո՞ր վայրը այդպիսին կլինեք նման ճակատագրի արժանացած մանուկների համար: Բայց երբ գալիս են աշունն ու ձմեռը, այն ավելի անհրապույր է դառնում:

Սենյակները ջերմամեկուսացրել են պոլիէթիլենով, էլեկտրական ջեռուցիչներ են միացնում, սակայն 60-70 քմ սենյակի ջերմությունը 13 աստիճանից չի բարձրանում:

Մանկատանը պետք է սեփական կաթսայատուն, սակայն նման թանկ հաճույք՝ մոտ 22000 դոլար, պետքությունը նախատեսված չէ: Ամեն տարի պետքությունը 80000 դոլար է հատկացնում մանկատանը, թեև նորմալ գործելու համար նրան անհրաժեշտ է ավելի քան 140000 դոլար:

«Ամեն տարի հսկայական գումարներ ենք ծախում էլեկտրաէներգիայով տաքացնելու համար և, միևնույն է, տառապում ենք ցուցից»,- ասում է մանկատան տնօրեն Գրետա Հարությունյանը:

Ըստ նախնական հաշվարկների՝ կաթսայատունն արագ կհատուցի ծախսերը, քանի որ կփոխարինի թանկ էլեկտրական ջեռուցիչներին՝ միաժամանակ ապահովելով մանուկներին անհրաժեշտ 18-20 աստիճանը:

Հարությունյանի հավաստմամբ՝ էլեկտրաէներգիայից խնայված գումարով հնարավոր կլինեք բարելավել երեխաների սնունդը և հագուստը, ավելացնել էսկուրսիաների թիվը:

«Ծնողական ջերմությունից ու գուրգուրանքից զրկված այս փոքրիկներն առավել կարիք ունեն տաքանալու ու հարմարավետ պայմաններում ապրելու, որպեսզի մոռանան իրենց լքվածությունը, հարազատ տուն ունենալու երազանքը»,- ասում է Չաքարյանը:

Զանաքեռ-Չեթունի մանկատան մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (374-1) 25-15-86 կամ (374-1) 25-65-92: «Արմենիանուի» «Հայ Ձմեռ պայպ» ծրագրին ներդրում անելու համար զանգահարեք 53-24-22: Գայանե Աբրահամյան Լուսանկարները՝ Արթուր Թորոսյան



Երկու սենյակ, մեկ ընտանիք. ընտանիքը մեծանում է անդրանիկ որդու անակնկալ վերադարձով

Երևանի հիվանդանոցներից մեկում 26-ամյա Լաուրա Երիցյանը հայտնվել էր որոշում կայացնելու անհրաժեշտության առաջ՝ մի որոշում, որին նա որպես մայր պատրաստ չէր. բժիշկներն ասել էին, որ երեխան, ընդ որում՝ առաջին որդին, կարող է մահանալ տասը օրում:

Լաուրան նոր էր ունեցել Հայկին՝ իր չորրորդ երեխային: Տաթևիկ, Անահիտ և Գայանե դուստրերը 9, 8 և 2 տարեկան էին ու բոլորն էլ առողջ էին: Լաուրան և ամուսինը՝ Վարդանը, որդի էին ուզում, բայց երբ նրանց ցանկությունն իրականացավ, երեխան ծնվեց լուրջ արտաներով՝ Լապաստակի շրթունքով և քիմքի վրա անցքով (գայլի երախ):

Միկրովիրաբույժներից մեկը հայտնել է ծնողներին, որ երեխան ապրելու շանս չունի:

Եթե անգամ հնարավոր լիներ ինչ-որ կերպ վիրահատել տալ երեխային, դրան պետք է հաջողվեր թանկ բժշկական գործողություններն ու բուժումը տանը: Ո՛չ Լաուրան, ո՛չ Վարդանը աշխատանք չունեին: Եվ Լաուրան ստորագրեց Հայկից հրաժարվելու փաստաթուղթը ու նրան թողեց հիվանդանոցում՝ սպասելով անխուսափելիին:

«Ես երեք երեխա էլ ունեի, - ասում է մայրը, որն այժմ 29 տարեկան է, ոչ թե արդարանալու, այլ իր արարքն ինչ-որ կերպ բացատրելու համար: - Մտածում էի, որ եթե երեխային տուն բերեմ, ու հետո մի բան պատահի, մյուս երեխաների համար ավելի վատ կլինի»: Լաուրան երեխային թողեց հիվանդանոցում և այլևս չսեց նրա մասին:

Հայկը ծնվել էր 2000 թվականի փետրվարի 7-ին: Պատմությունն իր շարունակությունը ստացավ այս տարվա օգոստոսին:

Կեսգիշերին մոտ Երիցյանների դուռը թակեց մի կին: Նա ասաց, թե ուզում է Լաուրան ստորագրի որոշ փաստաթղթեր՝ կապված իր տղայի որդեգրման հետ:

Գիշերային այցելուն ասաց Լաուրային, որ երեք տարեկան տղան Գյումրիի մանկատանն է: Կնոջ հավաստմամբ՝ տղան մտավոր հետամնաց էր, չէր կարողանում կանգնել, նստել: Լաուրան չստորագրեց փաստաթղթերը, այլ զանգահարեց Գյումրիի իր ազգականներին և խնդրեց գնալ մանկատուն ու ստուգել կնոջ պատմածը (նա կասկածում էր, որ կինը փորձում է փող աշխատել՝ ինչ-որ մեկին օգնելով որդեգրելու Հայկին):

Ազգականներն իսկապես գտնում են Հայկին, սակայն ոչ այն վիճակում, ինչպես նկարագրել էր կինը: Տղան առողջ, աշխույժ էր: «Երջանիկ ժպիտ վիրահատություն» ծրագիրը, որը ֆինանսավորում են «Ուրուլ Վիժն», «Բրիթիշ Եյրվեյզ» և «Բրիտանական խորհուրդ» կազմակերպությունները, միջոցներ էին տրամադրել Հայկի շրթունքը վիրահատելու և նրա քիմքի անցքը ծածկող պրոթեզի համար:

Մրակ բանը, որ Լաուրան գիտեր սեփական որդու մասին, այն էր, որ նա շիկաեղ էր ու կապույտ այքեր ուներ: «Հենց նույն օրն ուզում էի գնալ ու վերցնել նրան», - ասում է Լաուրան: Սակայն պետք էր մի քիչ սպասել, մինչև անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստ լինեին: Եվ այսպես, Հայկի կենդանի լինելու մասին իմանալուց մի քանի օր հետո Լաուրան գնում է մանկատուն և «ետ որդեգրում» իր անդրանիկ որդուն (Հայկից հետո ընտանիքն ունենում է երկրորդ որդուն՝ Յովհաննեսին, որն այժմ մեկ տարեկան է):

«Մեքենայում ես միանգամից իրիցեցի Հայկի հագուստը, - ասում է Լաուրան: - Հենց մեքենան շարժվեց, նա գլուխը դրեց ուսիս ու քնեց»: Այստեղ հեքիաթը կարող էր ավարտվել: Բայց սա երջանիկ ավարտ ունեցող պատմությունն չէ:

Երիցյաններն ապրում են այն թաղամասում, որը քանդվելու է, որպեսզի իր տեղը գիշի Երևանի շքեղ Հյուսիսային պողոտային: Ապրում են երկու սենյակում, յուրաքանչյուրը՝ 2,5x3,5 մ լավերի: Երկու մեծահասակ, երկու դեռահաս դարձող աղջիկ, մեկ և նախադպրոցական տարիքի աղջիկ և երկու մանուկ՝ երկու միկրովիրաբույժի համարժեք տարածքում: Խոհանոցը նույն միջանցքն է, որտեղ Լաուրան և Վարդանը է պատրաստում ամուսնու ու



երեխաների համար զազի բալոնի վրա, քանի որ սալօջախ չունի: Չուզարանն առանձին է, սակայն դրսում է, և ջուրն այնտեղ ձմռանը սառչում է: 31 տարեկան Վարդանը վարորդ է, այնպես որ, գործերը, Լաուրայի հավաստմամբ, ավելի լավ են, քան երբ նա աշխատանք գտնելու հույսով Ռուսաստան էր գնում-գալիս: Վարդանի վաստակը լավ է (որոշ չափանիշներով). Վարդանն ամսական ստանում է մոտ 100 դոլար, բայց ...

Հայկն անվճար խոսքի բուժում և հոգեբանական խորհրդատվություն է ստանում «Ուրուլ Վիժն» կազմակերպության ֆինանսավորած կենտրոնում: Լաուրան լաց է լինում, երբ ասում է, թե Հայկը դեռ չի պատկերացնում, որ ինքը նրա մայրն է: Որդու համար ինքը պարզապես մանկատան մի հերթական այցելու է: Հայկին ետ վերցնելը մի որոշում է, որը շատ առումներով կարող է հօգուտ Երիցյանների չլինել: Սակայն դա մի որոշում է, որն ընդունվել է շատ ավելի մեծ հաստատակամությամբ ու անհամեմատ նվազ հոգեկան տվյալներով, քան երեխայից հրաժարվելու որոշումը: «Կյանքը պահանջում է, որ մարդ ստիպի իրեն որոշակի բաներ անելու սեփական երեխաների համար, - ասում է Լաուրան: - Ես մեծացել եմ այն ժամանակներում, երբ ամեն ինչ լավ էր, և իմ ընտանիքն ապրում էր հարմարավետ քնակարանում: Ուզում եմ, որ իմ երեխաներն էլ ապրեն նման պայմաններում: «Ես սկսեցի հավատալ հրաշքերին Հայկին հետ բերելուց հետո: Այնպես որ, հավատում եմ, որ մի օր ամեն ինչ լավ կլինի»:

«Ուրուլ Վիժն»-ը միջազգային կազմակերպություն է, որ տարբեր մարդասիրական ծրագրեր է իրականացնում Հայաստանում: Կազմակերպության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.wvarmenia.am: Երիցյանների ընտանիքին սկիրատվություն անելու համար գրեք մեզ info@armenianow.com հասցեով: Ծրագրում ներգրվում անելու համար զանգահարեք 53-24-22:

Ջոն Հյուկ
Լուսանկարները՝ Արթուր Թորոյան



Օգնում են լսել. Գյումրիի մշակութային կենտրոնը օգնում է խուլ պատանուն

Շատ դեռահասների նման 15-ամյա Գյումրեցի Արամ Բաղդասարյանը ուրախանում է, երբ իր ընտանիքը պառկում է քնելու, և հեռուստացույցը մնում է իրեն: Արամի համար հեռուստացույցը պատուհան է դեպի անձանոթ աշխարհ՝ գայթակղիչ ու մի քիչ վախեցնող:

Արամն անջատում է հեռուստացույցի ծայրը. նրա համար այն անիմաստ ու զրգոնչ է: Արամը խուլ ու համր է վեց ամսականից՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ից, երբ Գյումրիի (այն ժամանակ՝ Լենինականը) հայտնի դարձավ իր ավերիչ երկրաշարժով:

Նա ոչինչ չի հիշում այդ օրվանից, բայց գիտե երկրաշարժի մասին: «Ապրում էինք հիվանդարկանի շենքի չորրորդ հարկում, - ասում է Արամի մայրը՝ Կարինե Բաղդասարյանը: - Երկրաշարժի ժամանակ մենք նախադասարան էինք, իսկ երեխան՝ հյուրասենյակում: Ցնցումներից փսիսները թափվեցին պահարանից, և հիշում եմ, որ երբ վազեցինք երեխայի մոտ, նրա անկողնու մեջ, գլխի մոտ, ապակու բեկորներ կային: Գուցե ինչ-որ բան ընկել էր նրա գլխին, թեև արտաքուստ վնասվածքներ չկային: Այդ պահին մտածում էինք միայն շենքից դուրս գալու մասին, որը սկսեց իլվել մեր այքերի առաջ»:

Կարինեի հավաստմամբ՝ որդին վաղ մանկությունում լսողական չեղում չի ունեցել: Նա արձագանքել է ձայներին ու ծիծաղել է: Սակայն այդ ճակատագրական առավոտից ձայնը նրա համար վերածվել է միայն զրգոնչ, անտանելի աղմուկի: Անա թե ինչու նա ուրախությամբ է իջեցնում հեռուստացույցի ձայնը:

Մի քանի տարի առաջ Գյումրիի ավատիպացիների կառուցած հիվանդանոցում Արամին լսողական առթք են տվել, որը քնավ չի օգնել նրան, հակառակը՝ նա սկսել է ավելի լավ լսել աղմուկը, ինչից նրա տառապանքները միայն խորանում են: «Հենց լսասարքը դնում էր ականջներին, անմիջապես հանում ու դնել էր նետում: Եթե փող ունենայինք, գուցե ավելի լավ բժիշկների կկարողանայինք դիմել: Ասում եմ, որ նման

դեպքերում վիրահատությունը կարող է արդյունավետ լինել: Բայց մեզ համար նույնիսկ շարքային այցը բժշկին պորթլեմ է, սովորական առողիոգրաման 20 հազար դրամ է», - ասում է Կարինեն:

Բաղդասարյաններն ապրում են 15 քառակուսի մետրանոց ժամանակավոր կացարանում, որը միաժամանակ խոհանոց, հյուրասենյակ ու ննջարան է ծառայում: Բացի Արամից, ընտանիքում մեկ երեխա էլ կա՝ 12-ամյա Սարգիսը: Կարինեի ամուսինը յարդի լուրջ հիվանդություն ունի: Երբ լավ է զգում, փող է վաստակում՝ Արամի հետ կոշիկ նորոգելով: Առանց այդ եկամտի ընտանիքը գոյությունը պահպանում է 8600 դրամ նպաստով:

«Փողը չի հեծիքում նույնիսկ դեղորայքին: Ամեն օր գլուխ եմ կոտրում, թե ինչ եփեմ ամուսնուս ու երեխաներիս համար», - ասում է Կարինեն: Բաղդասարյանները նոր քնակարանի օրդեր են ստացել, բայց Կարինեի հավաստմամբ՝ չեն տեղափոխվում, որովհետև ստիպված են ապրել երկուսենյականոց քնակարանում ամուսնու ազգականների հետ: Կառավարության որոշմամբ՝ քնակարան հատկացնելիս հաշվի են առնում երկրաշարժի ժամանակ կորցրած քնակարանների մակերեսը:

«Հաշվի չեն առնում, որ ընտանիքը մեծացել է: Մեր հին քնակարանում ամուսնուս հարազատների հետ միասին վեց հոգի էինք: Այժմ տասը հոգի ենք և չենք տեղավորվի քնակարանում», - բացատրում է Կարինեն:

Փորձելով շեղել մորը տխուր մտքերից՝ Արամը ժպտում է և գլխով է անում Գյումրիի ֆուկլորի հերոս Ռուստա Մուկուչի տիկնիկի կողմը: Ռուստա Մուկուչը Արամի կպան և լսող ու խոսող աշխարհի հետ: Պատանին դարձել է «Մեղվիկ» հասարակական կազմակերպության տիկնիկային թատրոնի դերասան: Եթե արտաջ իրական կյանքում խանգարում է նրան, ապա Մուկուչի հետ Արամը ոչ մի պորթլեմ չունի: «Տղան գտել է իրեն մշակութային կենտրոնում, - ասում է «Մեղվիկի» տնօրեն Վեհանուշ Հովհաննիսյանը, - այնպիսի ոգևորությամբ է աշխատում տիկնիկային



ներկայացման բեմադրության վրա, որ անկասկած է՝ նա գտել է իր կոյուրմը: Հովհաննիսյանը հիմնել է «Մեղվիկ» մշակութային կենտրոնը երկրաշարժից անմիջապես հետո: Կենտրոնը Գյումրիի երեխաներին օգնում է հաղթահարել արտի գոտում ապրելու հոգեբանական դժվարությունները: Նա ասում է, որ հասկանում է Արամին առանց խոսքի:

«Տղան վատ է զգում, երբ մենք զանգատվում ենք կյանքի դժվարություններից, - ասում է նա: - Այստեղ, աշխատելով թատերական ներկայացումների վրա, նկարելով, անեղնագործելով, երեխաները մոռանում են սեփական հոգսերը: Այս երեխաների կյանքը սարսափելի փորձություն է, և ոչ ոք չգիտե՝ կկարողանան արդյոք երբևէ խոսել նրանց լրիվ հոգեբանական ապաքինման մասին»:

Արամը յուրովի է մեկնաբանում Վեհանուշի խոսքերը: Կարինեն «թարգմանում» է նրա մեկնաբանությունը այսպես. «Երբ նոր տարին գա, ես կխոսեմ», - ասում է տղան մոր միջոցով, և նրա պարզ, դարձնազույն այքերը սկսում են փայլել:

«Մեղվիկ» մշակութային կենտրոնի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (374-1) 42-92-64 համարով կամ դիմել meghvik@freenet.am հասցեով: Եթե ցանկանում եք օգնություն ցույց տալ Բաղդասարյաններին կամ «Արմենիա-Նաու» շաբաթաթերթի «Հայ մեծ պապ» ծրագրի նման կարիքներ ունեցող մյուս հերոսներին, զանգահարեք 53-24-22: Լաուրա Մանուկարովա
Լուսանկարը՝ Արտյոմ Նալբանդյան

Խախտված կապեր. ընտանեկան բռնության գոհ դարձածների «Հուլյսը»

Վստիտ, կծկված, վախեցած թույլին այցելով երիտասարդ կինը գրեթե մանկական անկապ խոսքով, որը շարունակ ընդհատվում է հեկեկոցով, փորձում է համապատասխան բառեր գտնել իր պատմության համար...

«Ես սարսափում էի տուն վերադառնալ, վախեցում էի, որ կսպանի ինձ»,- վերջապես ասում է նա ու անմիջապես լռում՝ հասկացնելով, որ դա իր պատմության վերջն է։

23-ամյա Մարիամ Փանոսյանը հայտնվել է Հայաստանի մայրության հիմնադրամի «Հուլյս» ճգնաժամային կենտրոնում, երբ ամուսինը նրան բառացիորեն դուրս է նետել երկրորդ հարկի պատուհանից։ Մարիամը միայն թեթև վնասվածքներ է ստացել։ Մակայն վախը կարծես հիմնավորվել է նրա հոգում։ Նրան ճգնաժամային կենտրոն են բերել մայրը և մորաքույրը։

Նրանք էլ պատմել են կատարվածի մասին ու պնդել են, որ կենտրոնի իրավաբանները պահադրան ձևակերպեն։ Մակայն մասնագետները չեն շտապել ամուսնալուծելու ամուսիններին։ Աշխատակիցների հավաստմամբ՝ կենտրոնի նպատակն է ամրապնդել ընտանիքները, օգնել նրանց հաղթահարելու կոնֆլիկտային իրավիճակները, և իրենց խորհուրդ են տալիս ամուսնալուծվել միայն ծայրահեղ դեպքերում։

«Հուլյսը» երկու օրվա ընտանեկան կենտրոն և ապաստարան բռնության գոհների համար։ Մեկ ամիս ընտանեկան կենտրոնում խորհրդատվություն ստանալուց հետո Մարիամը (որովհետև նրա ամուսինը փոխված է ապահովության նկատառումներով) և նրա երկու երեխաները մեկ ամիս էլ անց են կացրել ապաստարանում՝ հոգեբանական վերականգնման համար։ Միջամանակ «Հուլյս» մասնագետները աշխատել են նրա ամուսնու հետ՝ փորձելով պարզել բռնության պատճառները։

«Շատ կարևոր է, որ այն ընտանիքների ամուսիններն ու անդամները, որտեղ կոնֆլիկտ կա, իմանան մեր գործունեության մասին։ Այսպես անհար կլինի բռնության գոհի վերադարձը տուն», - ասում է Մայրության հիմնադրամի նախագահ Սուսաննա Ալյանյանը։

Ճգնաժամային կենտրոնի աշխատակիցները ձգտում են հնարավորինս հարմարվել տեղի հայկական պայմաններին։ Ապաստարանը նրանք անվանել են «Մոր և մանկան տուն»՝ հուսալով, որ այդ անվանումը չի հարուցի հասարակության քաջասական վերաբերմունքը։

«Մեզ մոտ ընտրված չէ ընտանեկան պրոբլեմները ընտրելու օրինակներ, իսկ բռնությունը գրեթե արգելված թեմա է, - ասում է Ս. Ալյանյանը։ - Որոշ մարդիկ այսօր էլ այն կարծիքն են, որ հայկական ընտանիքներում բռնություն չկա ու չի կարող լինել»։

2002 թվականին Մայրության հիմնադրամը հետազոտություն է անցկացրել 1200 ընտանիքներում։

Արդյունքները ցույց են տվել, որ կանանց 35 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական բռնության, 70 տոկոսը՝ հոգեբանական, իսկ 0,3 տոկոսը՝ զանազան բռնությունների։

«Շատ կանայք անգամ չեն գիտակցում, որ աշխատելու, ընկերների հետ շփվելու կամ որոշակի հազուստ կրելու արգելքը կարող է որակվել որպես բռնություն։ Նրանք նաև չեն գիտակցում, որ իրենց պետք է բողոքեն ոչ թե այն ժամանակ, երբ ծեծը տանք դարձել է սովորական երևույթ, այլ անմիջապես առաջին ապաստանից հետո», - ասում է Ալյանյանը։

Այն հարցին, թե արդյոք ընտանեկան բռնությունը Հայաստանում սպառնալի չափեր ունի՝ Սուսաննա Ալյանյանը պատասխանում է հակափաստարկով։

«Եթե կա պրոբլեմ, և ոչ մի միջոց չի ձեռնարկվում այն մեղմելու կամ արմատախիղ անելու համար, ապա միանգամայն հնարավոր է, որ այն խորանա և սպառնալի չափեր ընդունի։ Իրավիճակը բարդանում է նրանով, որ առկա են սոցիալական ղեկավար պայմանների հետ կապված ծանրացուցիչ հանգամանակներ։ Տղամարդկանց և կանանց միջև ավանդական դերային ֆունկցիաների փոփոխությունները նույնպես նպաստում են բռնությունների իրադրմանը։ Այսօր կանայք երբեմն դառնում են ընտանիքի կերակրողը, մինչդեռ ավանդաբար ընտանիքի կերակրողը և, հետևաբար, գլուխը պետք է լինի ամուսինը», - ասում է Ալյանյանը։

Մարիամ Փանոսյանի ընտանիքում չկային «ծանրացուցիչ» հանգամանակներ. ամուսինը ընտանիքի կերակրողն ու անվիճելի հեղինակությունն էր։

«Մարիամի պրոբլեմը գալիս է մանուկ տարիքից, - ասում է հոգեբան Աննա Բաղայանը։ - Նա շատ ագրեսիվ մայր ունի, որն արգելել է աղջկան ընկերներ ունենալ, պարզապես տնից դուրս գալ։ Մարիամը բոլորովին հարմարված չի եղել արտաքին աշխարհին, նա մեծացել է ինքնամոլորի և չլիվող»։

Մարիամին ամուսինը ընտրել է մայրը, երբ աղջիկը 17 տարեկան էր։ Կարծես նախանձելի փեսացու էր՝ հարուստ, մարդամոտ, երկար ժամանակ ելույթայում և պարծ։ Մարիամը նրան իրենց կյանքի կնիք էր դրել, զեղծելով ու համեստ։ Նրանց համատեղ կյանքի առաջին ամիսն անցել է շատ հարթ։ Կոնֆլիկտները սկսվել են, երբ պարզվել է, որ Մարիամը, որը պատրաստվում էր մայրանալու, ինքն էլ դեռևս երեխա է։

«Մենք գրուցեցինք նրա ամուսնու հետ։ Նրան հավասարակշռությունից հանել է կնոջ հասունության պակասը, կինը չի կարող ոչ ծաշ ելել, ոչ գնումներ անել, - ասում է հոգեբանը։ - Ամուսինն իր վրա է վերցրել ընտանիքի ամբողջ հոգը, երեխաներին, քայքայ միևնույն ժամանակ խիստ զայրացել ու ամաչել է կնոջ ինտրուսիվությունից, հատկապես ընկերների և ազգականների շրջանում, որոնք ծաղրել են իրեն։

Դա էլ հանգեցրել է պոռթկման, և նա Մարիամին դուրս է նետել պատուհանից»։

Փանոսյանները միակ զույգն էին ամբողջ տարվա ընթացքում, որին կենտրոնն օգնեց ամուսնալուծվել։ Մարիամը մնաց երկու երեխաների հետ՝ երկուս ու կես և հինգ տարեկան։

«Մենք օգնեցինք Մարիամին աշխատանք գտնել։ Նա դառնում է ավելի անկախ, ինքնավստահ։ Մակայն դեռ չի կարողանում հանգիստ, առանց արցունքների խոսել ամուսնու և իր հետ կատարվածի մասին։ Դոզու խորքում նա թերևս հույս ունի, որ մի օր իրենք կմիանան», - ասում է հոգեբան Բաղայանը։

«Հուլյս» ճգնաժամային կենտրոնի ծառայություններից նրա գոյության մեկ տարվա ընթացքում օգտվել է 566 մարդ (385 կին, 93 տղամարդ և 88 երեխա)։ 49 կին մեկ շաբաթից մինչև մեկ ամիս ժամանակ է անցկացրել ապաստարանում։

Հայաստանի մայրության հիմնադրամի «Ընտանեկան բռնության գոհների աջակցության ծրագիրը» նախատեսված է երկու տարվա համար և ֆինանսավորվում է Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից։

«Հաջորդ տարվա աշխատանքները կկանգնեն փակման սպառնալիքի առաջ, - ասում է Ալյանյանը։ - Բայց ինչպե՞ս կարելի է դուրս գալ այն մարդկանց երեսին, ովքեր ունեն մեր օգնության կարիքը։ Ուստի արդեն այսօր փնտրում ենք հնարավոր ղոնորներ, ովքեր կօգնեն կենտրոնին պահել այս շենքը»։

«Հուլյսի» մասին տեղեկություններ ստանալու համար գանգահարեք (374-1) 28-75-49 կամ այցելեք maternity@infocom.am հասցեն։ «ԱրմենիաՆաուի» «Հայ Ձմեռ պապ» ծրագրում ներդրում անելու համար զանգահարեք 53-24-22։



Հանուն արվեստի և ոչ միայն. կանայք և դեռահասները բանտում արհեստ են սովորում

Սեյանյանը լամպերի դեղնավուն լույսի ներքո կողք կողքի նստած մի ցանի անչափահասներ ու կանայք փորձում են կապից ինչ-որ զեղծելի բան ստեղծել։ Երբ ավարտում են գործը, իրանում են իրենց ստեղծածով ու նաև զարմանում, որ իրենց էլ կարող են արտել։

Սա կանայք և անչափահասների «Տրտուկ» մշակութային հասարակական կազմակերպությունը այն վերածել է օրինակակերտի համար նախատեսված մի յուրօրինակ ստեղծագործական կենտրոն-գաղութ։

«Կարծում են, որ հանցագործ դառնալու հիմնական պատճառը դաստիարակության պակասն է, և մենք փորձում ենք զեղծելի միջոցով քաջահայտել կայանավորների ներաշխարհը, - ասում է «Տրտուկի» ղեկավար Թեմիկ Կալախյանը։ - Դա մի զարմանալի երևույթ է, երբ մարդասպանության համար դատված կինը կապից իրաշախի գործեր է ստեղծում»։

2002 թվականի հունվարից ավելի քան 120 կայանավոր անչափահասներ և կանայք (նրանք մեծ մասն արդեն ազատ է արձակվել) գաղութում մասնակցել են «Տրտուկի» իրականացրած տարբեր միջոցառումների, ներկայացրել են քանդակներ, ստեղծել են գաղութի «Եջ» ամսաթերթը, սովորել են ազգագրական երգեր ու պարեր, կերպարվեստ և իյուրը։

Այս տարվա փետրվարից կայանավորները սովորում են կավագործություն, որն ցուտ կազմակերպիչների առավել հաջողված ծրագրերից մեկն է։

Լոյենթերի 18-ին կայանավորների կավե աշխատանքները ցուցադրվել են Երևանի ժողովրդական արվեստի թանգարանում։ Ցուցահանդեսին ներկա են եղել նաև գործերի հեղինակները։

18-ամյա Կապից գաղութում հայտնվել է գողության համար։ Արդեն մի ցանի ամիս հաճախում է կավագործության խմբակ։

«Որ «զուլում» լաշխատեի, գնում-ստում էի կավագործության սեյանյանի դասն առաջ ու ժամանակ մեծցում», - ասում է նա։ - Բայց Կալախյանը մի օր չղայնացավ, ես էլ բողոքված նստեցի ու կավից ափսոս սարքեցի, մեջ էլ եկեղծեցի ցանկալեցի ու տեսա՝ սիրուն քան դարձավ։ Այդ օրվանից արդեն սարքում են»։

Կապիցն ասում է, որ կավագործությունն իրեն շատ է դուր եկել ոչ միայն որպես արհեստ, այլ նաև որպես փող վաստակելու միջոց։

«Հաջորդ ամիս ազատվելու են գաղութից, քայքայ կուզեի ավելի շատ սովորել այս գործը, որպեսզի ազատության մեջ սրանով փող աշխատեմ», - ասում է Կապիցը։ - օրինակ՝ եթե իմ ափսոս

ծախեմ 500 դրամով, կանոնեմ մի կիլո կավ ու նորից հինգ նվաճ բան կարգեմ։ Սա լավ բիզնես է»։

Ըստ 45-ամյա կավագործ Բարսեղ Հարությունյանի՝ անչափահասները մեծ խանդավառությամբ են այցելում այս խմբակը։

«Մակայն կա մի մեծ խնդիր, - ասում է վարպետ Բարսեղը, - շաքաթական երկու օրը շատ քիչ է կավագործություն սովորելու համար, մասնավորապես որ շատերը կարճաժամկետ դատավճռությունից հետո ազատ են արձակվում և չեն հասցնում սովորել արհեստի նորությունները»։

Այժմ «Տրտուկ» փորձում է միջոցներ հայթայթել, որպեսզի զարգացնի դուրս նույնատիպ խմբակ ստեղծի նախկին սաների համար։

«Ազատվելուց հետո նրանք զանգահարում են ինձ և խնդրում են շարունակել պարապմունքները, - ասում է Կալախյանը։ - Եթե անտեսենք այդ ցանկությունները, շատ հնարավոր է, որ նախկին կայանավորները կրկին հանցագործության գնան»։

«Տրտուկ» ֆինանսավորվում է Բաց հասարակության ինստիտուտից (www.osi.am), սակայն փետրվարին ֆինանսավորումը ավարտվելու է։

«Ինստիտուտը նույն ծրագիրը երկրորդ անգամ չի ֆինանսավորում, և մեզ համար շատ ղեկավար կլինի կայանավորներին հայտնել, որ իրենց այլևս չեն կարող կավագործություն սովորել։ Իսկ այլ աղբյուրներ առայժմ չկան», - ասում է Կալախյանը։

Գաղութի աշխատակազմը նույնպես բարեկամացել է «Տրտուկի» հետ և նրան համարում է կրեմլիկի անբաժանելի մաս։

«Եթե «Տրտուկ» գործունեության ընթացքում գնեմ մեկ դարձի գա հանցագործ աշխարհից, մեծ հաղթանակ կլինի, - ասում է գաղութի ղեկավար, արդարադատության գնդապետ Յուրա Տամայանը։ - Իսկ ես վստահ եմ, որ նրանք արդեն մի ցանի հոգու ճիշտ ուղու վրա են դրել»։

Ըստ Տամայանի՝ վերջին տարիներին կայանավորների թիվը զգալիորեն նվազել է։ Այսօր նրանք թիվը 100-ից չի անցնում, որոնցից ընդամենը յոթն են անչափահաս։

Մարդասպանության համար դատապարտված 29-ամյա Անուշ Գրիգորյանը արդեն երկու տարուց ավելի գաղութում է։ Նա այստեղ կանցկացնի ևս հինգ տարի։ Անուշը հաճախում է կավագործության դասերին և ասում է, որ կավից ծեփում է իր ապագան։ «Անհամբերությամբ սպասում եմ ազատվելուն, որ գաղութում սովորածս միանձուլեմ իմ մտադրանքներին և ստեղծեմ իմ սեփական գործերը»։

Նա համոզված է, որ մի օր սուրբ կմատուցի իր հյուրերին սեփական ձեռքերով պատրաստած սուրճի գավաթներով ու քաղցրամանով։

Գաղութի համար նախատեսված «Տրտուկ» ստեղծագործական ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք (374-1) 42-16-57 կամ գրեք ttu@media.am հասցեով։ «ԱրմենիաՆաուի» «Հայ Ձմեռ պապ» ծրագրում ներդրում անելու համար զանգահարեք 53-24-22։

Սուրեն Դեհեյրյան
Լուսանկարները՝ Շանթ Կալախյան



Միգրոն 1-ին էջում

Մեծացնելով Վահրամի՝ Մարատը միշտ մտածել է, որ ընտանիքի կարիքները հոգալու հարցում կկարողանա ապավինել նրան: Այսօր ընտանիքի գոյությունը պատվում է Վահրամի բացակայության և ընտանիքի վրա դրա ունեցած ծանր ազդեցության շուրջը:

«Տղաս տարբեր ամողջական պորթլեմներ է ունեցել՝ ուղեղի ցնցում, հոգեկան շեղումներ, գլխացավեր, դեղնախտ, լյարդի մեծացում, վատ տեսողություն, - ասում է հայրը՝ ցույց տալով հիվանդությունները հաստատող փաստաթղթերը: - Պառնել է հոգեբուժական և այլ հիվանդանոցներում»: Ռազմաբժշկական հանձնաժողովը արձանագրել է Վահրամի հիվանդությունները, սակայն զինկոմն ասել է. «Եթե քո որդու նմանները խուսափեն բանակից, ո՞վ պետք է ծառայի»:

Չինվորական ծառայության առաջին իսկ օրից Վահրամը հայտնվել է հոսպիտալներում: Վեց ամիս հետո նա անհետացել է:

Ընտանիքում բոլորը համոզված են, որ Վահրամը ողջ է և կվերադառնա: Մինչև այսօր ընտանիքը

կազմակերպությունից, սակայն հետո հրաժարվել է:

«Չափազանց ազնիվ և անբասիր անձնավորություն է Մարատ Բաբայանը: Նա միշտ հրաժարվում է մեր օգնությունից, բայց տարիների ընթացքում տեսնում եմ, թե ինչպես է այդ մարդը աստիճանաբար կործանվում»,- ասում է «Ընդդեմ իրավական բռնությունների» կազմակերպության նախագահ Լարիսա Ալավերդյանը:

Մինչև թռչակի անցնելը Մարատ Բաբայանը ինժեներ է եղել: Այսօր աշխատում է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում որպես լաբորանտ: Մինչև անցյալ տարի ընտանիքի քույրն է լրացրել է ամուսնախոսք գրառվելով: Բայց այս տարի՝ որդու կորստյան ութերորդ տարում, նրա եռանդն այլևս չի բավականացնում լրացուցիչ աշխատանքի համար:

«Իմ ձեռքերով է երևանը կառուցվել, 49 տարի աշխատել եմ այս պետության համար և միայն մի գնահատականի էի սպասում, որ հիվանդ տղայիս բանակ չտանեն: Տարել եք, դե հիմա ե՛տ տվեք»,- բողոքում է հայրը:

Վերջին պաշտոնական տեղեկությունը որդու մասին Մարատ Բաբայանը ստացել է հոկտեմբերին. «Ձեր դիմումը մանրամասն ուսումնասիրվել է ԳՀ զինված ուժերի գլխավոր շտաբում: Ձեր տղայի Վահրամ Բաբայանի վերաբերյալ կատարվել են հարցումներ, այդ թվում նաև «Միջազգային Կարմիր խաչ» կազմակերպությանը: Ձեր որդու Ադրբեջանում գերության մեջ գտնվելու փաստը հաստատվել է: ԳՀ ՊՆ կողմից այդ ուղղությամբ տարվող աշխատանքներն առայժմ արդյունք չեն տվել»:

«Պետությունը չի՝ մտածում, որ տղամարդ է տնից պակասել՝ ընտանիքին կերակրողը, մենք ինչպե՞ս ենք առանց նրա ապրելու:



Ութ ու կես տարի լուր չունենց Վահրամից,- ասում է Լազենին:

«Ընդդեմ իրավական բռնությունների» հասարակական կազմակերպության մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք (374-1) 58-28-19 կամ (374-1) 56-82-72 համարներով կամ դիմեք favl@netsys.am հասցեով:

«Արմենիանուի» «Հայ Ձմեռ պապ» ծրագրում ներդրում անելու համար զանգահարեք 53-24-22:

Ժաննա Ալեքսանյան
Լուսանկարները՝ Հանր խայալեան



իր բոլոր պորթլեմների լուծումը կապում է Վահրամի վերադարձի հետ:

«Վահրամը իմ միակ որդին է, նա պիտի վերադառնա, որ ինձ ու քույրերին թիկունք լինի, - ասում է հայրը: - Ես արդեն մեծացել եմ, հո քույրերն անտեր չե՛ն մնալու»:

Վահրամի անհետանալուց տասը օր հետո Միջազգային Կարմիր խաչը այցելել է Բաբայաններին և մի նամակ բերել, որը հաստատում էր, որ իրենց գտել են Վահրամին ադրբեջանական մի քաղաքում, և որ նա լուրջ հիվանդ է:

Տասը օր հետո՝ Միջազգային Կարմիր խաչի երկրորդ այցելության ժամանակ (դեղորայք հասցնելու նպատակով), Վահրամն այլևս այնտեղ չի եղել:

Սոցիալական ապահովության նախարարությունը տարեկան 10000 դրամ (մոտ 18 դոլար) փոխհատուցում է ամաչարկել: Մարատը մերժում է ընդունել այն՝ ասելով, որ դրանով փորձում են փակել իր բերանը:

Օգնություն է ամաչարկել նաև «Ընդդեմ իրավական բռնությունների» հասարակական կազմակերպությունը: Մարատը մեկ անգամ 4000 դրամ (մոտ 7 դոլար) օգնություն է ստացել այս

Ժպիտ ողբերգության միջով. աղջիկը համակերպվում է հաշմանդամության հետ

Դեռատի, ժպտերես աղջիկը զազայիչը ոտքով մոտեցնում է զազօջախին, ապա, ոտքի մատներով բացելով զազը՝ վառում է այն, որպեսզի սուրճ պատրաստի, որը մատուցում է ժպիտով:

Մերի Մեծույանը 18 տարեկան է և վերջին տասը տարվա ընթացքում ստիպված է գտնել ապրելու այնպիսի միջոցներ, որոնք խիստ տարբերվում են մյուսների միջոցներից: Կապանում, որը Երևանից ավելի քան 320 կմ դեպի հարավ է գտնվում, գրեթե բոլորն էլ զոյատնելու մասին ինչ-որ բան գիտեն: Մերին մյուսներից ավելին գիտե:

Կապանը մոտ է Ադրբեջանի սահմանին և 1993 թվականին՝ պատերազմի թեժ պահին, ապահով վայր չէր: Այն առանձնապես անապահով դարձավ լուրջաբար Մերիի համար մի ամառում...

«Ամեն ինչ կատարվեց ակնթարթորեն,- վերհիշում է Մերին,- հորեղբորս երեխաների հետ գնացել էի հորս ու հորեղբորս աշխատանքի վայր: Մի շուն կար այնտեղ, որին շատ էի սիրում: Ծան հետ խաղում էի, այդ պահին հանկարծ ռազմական ինքնաթիռը սկսեց կասետային ռումբեր գցել: Մեկն էլ ընկավ ինձ մոտ, ու ես որոշ ժամանակ էլ ոչինչ չեմ զգացել ու հիշել»:

Երբ Մերին ուշքի է եկել, նրա համար սկսվել է բոլորովին այլ կյանք:

«Երբ ձեռքերս դրեցի գետնին, ակնթարթորեն հավիցեցի, արյուն չտեսա, ձեռքերս այրվեցին ու վերքերը փակվեցին: Ամեն ինչ սարսափելի էր: Ձեռքերս չգտանք, վնասվեց նաև ոտքս: Ծունս սատկեց, իմ կողքի բոլոր մարդիկ տուժեցին, սակայն ամենաշատը տուժեցի ես: Բոլորը ահաբեկված սկսեցին այս ու այն կողմ վազել: Հայրս գրկեց ինձ ու վազեց դեպի մեքենան: Հիվանդանոցում նույնիսկ բժիշկներն էին վախեցել իմ տեսքից, և որոշ ժամանակ ոչ մեկն ինձ չի մոտեցել, որ օգնություն ցույց տա: Առաջին անգամ ինձ վիրահատեցին Կապանում, հետո տեղափոխեցին Երևան»:

Դրանից հետո աղջկան մի քանի անգամ վիրահատել են, երկու անգամ ուղարկել են ԱՄՆ բուժման: Հինգ տարի առաջ նրան պրոթեզավորել են:

«Պրոթեզներն ինձ տվեցին, երբ 13 տարեկան էի,- ասում է Մերին,- հիմա դրանք արդեն փոքրացել են: Պրոթեզներն ընդամենը երեք մատ ունեն, սակայն էի ինձ շատ են օգնում, ես գոնե հնարավորություն ունեմ ինքնուրույն հագնվել»:


«Փորձում եմ ապրել այնպես, ինչպես բոլորը»,- ասում է Մերին այնպիսի կենսուրախությամբ ու լավատեսությամբ, որ իր սարսափելի անցյալի վերհուշի նշույլ իսկ չի զգացվում:

«Նա դեռ երեխա է,- ասում է հայրը՝ 46-ամյա Կարոն, որը դժվարությամբ է համակերպվում դստեր վիճակի հետ և չի կարողանում ամանց հուզմունքի նայել նրան: - Դժվարություններ կարողանում ամանց հուզմունքի նայել նրան: - Դժվարություններ դեռ շատ կլինեն, բայց այսօր, երբ Մերին ինքնուրույն մի քան է անում, մեծ բան է մեզ համար: Ա՛խ, եթե ամեն ինչ մեր ուզածով լիներ...»:

Չնայած հոր ու եղբայրների տխուր հայացքներին, Մերին կենսախնդրությունը չի մարում:

«Ինչպե՞ս կարող ես նայել մարդուն ու լժպտալ», - համոզված է Մերին:

